

չելու մի երկրորդ կուռան ունինք Վարդան եւ Գրիգոր վանական եղբայրների ստացման թուականը, որ ինչպէս տեսանք, ՈԶԶ—1237 թուականն է: Հաւանական է ասել, որ Գրիգոր եւ Վարդան ստացել են միայն եւ ոչ նոր գրել տուել, հակառակ դէպքում որ եւ է խօսք կը լինէր գրչի եւ նկարչի մասին: Սորա վերայ աւելանում է այն հանգամանքը, որ ինչպէս վերեւ յիշեցինք, բնագրի արուեստը բոլորովին տարբեր է, ինչպէս եւ գրչութիւնը եւ մելանը Ձեռագրի եւ յիշատակարանի, Իդնատիոս նկարչի մեզ յայտնի գործերից:

Մեզ մնում է որոշել Աբաս նկարչի ժամանակը: Նկարագրութեան մէջ մատնանշել ենք արդէն, թէ Տէրունականների մագաղաթը տարբեր է բնագրի մագաղաթից. տարբեր էին եւ նրանց արուեստները. ուրեմն, բնագրի ծագման հետ կապ չունին նրանք: Բայց նոյնը ասել կարող չենք ստացողների եւ Աբասի ժամանակի նկատմամբ: Ստացողների փոքրիկ յիշատակարաններից մէկը գրուած է ոչ բնագրի թերթի վերայ, այլ Ղուկասի պատկերի (137բ.) նախընթաց էջի (139ա) վերայ. այստեղից այն պարզ եզրակացութիւնը պիտի հանենք, թէ կամ այս յիշատակարանը եւ Աբաս ժամանակակից են իրար, եւ կամ, թէ Աբաս աւելի հին է, երբ ձեռք են բերել մանրանկարները, դոցանից մէկի յետեւը գրուել է այս յիշատակարանը: Առաջին դէպքում Աբասի ժամանակը կը նոյնանայ ստացողների ժամանակի հետ, որ 1237 թուականն էր. երկրորդ դէպքում, պէտք է ընդունել աւելի հին, քան այս թուականը: Մենք հակուած ենք երկրորդն ընդունելու, թէեւ ժամանակով ոչ շատ հեռու միմեանցից:

Այսպիսի եզրակացութեան հիմք է ծառայում Աբասի ազգագրական նկարների մերձաւորութիւնը Հաղբատի նշանաւոր աւետարանի հետ, որ գրուած է 1211 թուին, «ի սբ ուխտս Հաղբատայ», «ձեռամբ Յակովբայ»: Նկարիչն է Մարգարէ: Մանրամասնութիւններով հետաքրքրուողները կարող են դիմել այդ Ձեռագրին նուիրած մեր ուսումնասիրութեան: Մեզ համար կարեւորն այն է

այժմ, որ Պ. Սթոուայի աւետարանի մի քանի ազգագրական պատկերները տարազի նրկատմամբ մեծ նմանութիւն ունին Հաղբատի աւետարանի հետ, ինչպէս Տբ, Ծա, եւ 15բ Շերենիկի եւ անանուն սպասաւորի եւ աշուղի նկարները, որոնց հետ համեմատելի են այս աւետարանի Մատթէոս եւ Մարկոս աւետարանիչների վերեւի մասի, աթոռների վերայ նստած (պատկ. 7) ֆիգուրների տարազի հետ: Սրանք Չաքարեանց Շրջանի եւ Վրաստանին սահմանամերձ Տաշիրը գաւառի, ուր եւ Հաղբատն էր, տարազն էր: Չաքարեանց երկու եղբայրների, Չաքարէ մեծի եւ Իւանէի պատկերաքանդակների տարազն էլ նոյնն է, Հառիճոյ վանքի արեւելեան պատին. քիչ տարբեր են միայն գլխարկները: Նոյն մերձաւորութիւնն ենք նկատում նաեւ Մուտն Յերուսաղէմ մանրանկարների մէջ ընդհանուր կերպով. այդ կրկնայարկ տաճարի, ատամնածեւ պարիսպների եւ ձիթենու ձեւակերպութեան զաղափարն է: Տաճարը իւր հայկական դմբեթով համեմատելի է նաեւ Հաղբատի աւետարանի Յովհաննու տաճարի հետ:

Ուշադրութեան արժանի է նաեւ, որ նկարիչը իւր անունը գրում է ոչ միայն հայերէն, այլ եւ վրացերէն եւ յունարէն (յունարէն բառերի գործածութիւն տեսնում ենք Հաղբատի եւ ուրիշ ձեռագիրների մէջ): Այս բոլոր հանգամանքները կշռելով, Աբաս երէցի պատկերներն էլ նոյն շրջանի եւ ժամանակի գործ ենք համարում, այսինքն Հաղբատի դպրոցի եւ մօտաւորապէս ԺԳ. դարի առաջին տասնամեակների:

Տարբարազաբար Ձեռագիրը վատ է պահուած, յատկապէս մանրանկարները, որոնց ներկերը շատ տեղ թափած են: Սաչելութեան շուրջը գրուած յիշատակարանն էլ անընթեռնելի է դարձած, որից, դուցէ, կրելի կը լինէր մի լոյս ստանալ:

Բանասիրական տեսակէտով հետաքրքրական են նաեւ յետին յիշատակարաններից մի երկուսը, որ նշանակութիւն ունին նաեւ աւետարանի յետագայ պատմութեան համար, բայց մեզ պակասում են արձանագրական հարկաւոր գրքերն ու աղբիւրները, լուսաբանելու նրանց մէջ յիշուած պատմական անունները, որոնց մասին, դուցէ, կը յաջողուի մի այլ ժամանակ վերադառնալ:

*Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ. Պրակ Ա. Հաղբատի դպրոցի մի գլուխ գործոց. 1935. Երուսաղէմ: